2782

(ՔՆՆԱԳԱՏԵԼԻ)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՏՓԽԻՍԻ ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Բ. տպագրութիւն

ԿԱԶՄԵՑ

Տփխիսի առաջին մասի Դորձակալ

ԳՐԻԳՈՐ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

206
Ս-25

ՏՓԽԻՍ
Տպարան «Գուտտենբերգ»
1907

370
1998-ԿԱ
906
Ս-25
28 SEP 2009

(ՔՆՆԱԳԱՏԵԼԻ)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՏՓԽԻՍԻ ՀԱՅԵՐԷՆ
ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

1004
15219

Հանրային գրադարան
Публичная библиотека
С.С.Р.А.
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Բ. տպագրութիւն

ԿԱԶՄԵՑ

Տփխիսի առաջին մասի Գործակալ
ԳՐԻԳՈՐ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՏՓԽԻՍ
Տպարան «Գուտենբերգ»
1907

24 JUN 2013

2782

Типографія „Гуттенбергъ“

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Արդարութեան վերայ հիմնուած բարեկարգութիւնը, Աստուածանից հառագայթած արև է, երկնային ցող ու անձրև է՝ որ բոլորին համահաւասար բեղմնաւորում է, բարեզարդում է և երջանկացնում, ցաւոք սրտի պէտք է ասած, որ Տփխիսի Հայ քահանաներիս մեծամասնութիւնը զուրկ է այդ արդարութեան ցողերի կենդանարար պարարումներից, որովհետև անարդար բարեկարգութիւնը՝ քահանաներիս դիրքը մի այնպիսի վիճակների մէջ շփոթեցրել է, որ կենդանարար ցողերի պարարումները բաժին ընկել է միմիայն մի կարգ քահանաների և դպիրների։

Ահա այն արդարութիւնը՝ որի բարեկարգ շաւիղներովն ենք յառաջ ընթանում, ահա այն արդարութիւնը՝ որին կոչում ենք արդարութիւն, ինչ արդարութիւն, միթէ արդարութիւն է, որ քահանաներիս մեծամասնութիւնից մէկը տարեկան կատարում է մօտաւորապէս 100 օրէնք՝ մկրտութիւն, ղսակ և թաղումն, այս 100 օրէնքիցը առաւելն ստանում է 200 ռուբլի. ըստ որում, գրեթէ կէս մասիցն աւել ձրի է կատարում, աղքատ և չքաւորներ լինելու առթիւ, իսկ մի կարգ քահանաներից մէկը՝ օրինակի համար կատարում է մի թաղումն՝ և ստանում է 500—1000 ռուբլի, այս դեռ մի օրինակատարութիւնիցն է։

Միթէ արդարութիւն է, որ քահանաներիս մեծամասնութիւնը՝ շատ աշխատի՝ քիչ վարձատրուի, իսկ

փոքրամասնութիւնը քիչ աշխատի՝ շատ ու շատ վարձատրուի։

Մթթէ արդարութիւն է, որ քահանաներիս մեծամասնութիւնը պարտքով ապրեն նկուղներում, իսկ փոքրամասնութիւնը բանկային հաղարներով՝ պալատներում և ամառանոցներում։

Հրապարակաւ եմ գրում, ես 31 տարի քահանայութեան պաշտօն վարող՝ աւագ քահանայս, եօթն ամեայ Տփխիսի գործակալս՝ հանդերձ գործակալական ռոճիկովս չեմ ստանում 200 տուն ծխերիցս տարեկան արդիւնք այնքան՝ որքան քաղաքիս մի կարգ քահանաների տիրացուներից մէկը. սա չեմ գրում ի լրոյ, և ոչ կարծիքով, այլ գրածս՝ աչքովս տեսել եմ, ականջներովս լսել եմ, և հետաքրքրութեամբս ստուգել։ Եթէ ես գործակալս այս օրին եմ, ինչ օրի են լինելու պաշտօնակիցներիցս շատերը, նոյն և մեր դպիրները։

Ի՞նչ արդարութիւն է, և ո՞վ կ'յօժարի արդար խղճով լսել ու տեսնել, որ մեզանից շատերը կրած աշխատանքների արդիւնքներից զրկուած՝ սգալի սրտով նստին ի լաց, իսկ միւս կարգը՝ հանգիստ միջոցաւ ոսկիները դիզած, լի համադամ կերակուրներով, ուրախ սրտով, ծիծաղ երեսով նստին ի հաց։ Իմաստունն ասում է «Զրկողին անհնարին է Աստուածանից ողորմութիւն գտնել, եթէ զրկանքը զրկուողին չ'դարձնէ»։

Ժողովուրդների Աչք համարուածներ, ժողովուրդների կարող Անձեր, բաւական համարեցէք այսքան զրկանքը, սորա առաջն առնելու համար ուշադրութիւն դարձրէք. անա արդարութեամբ պատրաստած կանոնադրութեանս մի մի օրինակը ուղարկում եմ Ձեզ և խոնարհաբար խնդրում, որ ուշադրութեամբ կարդաք քննադատէք, աւելորդ կէտերը՝ վերցնէք, պակասը՝ լրացնէք, իսկ եթէ սորան բաւական և զոհացուցիչ

գտնէք՝ այն ժամանակ, առանց բոպէ կորցնելու ոտքի կանգնեցէք, արդարութեան բարեկարգութեան դէմ գալուխ բարձրացնող անկուշտներին չթողնէք հրապարակ գալու և անիրաւութեամբ բարեկարգութիւնը խառնակելու, այլ Ինքներդ եղէք Որդիք զօրութեան, Ինքներդ եղէք այս գեղեցիկ ու արդար կանոնադրութեանը ձայն Բարձրացնողներ, և գործադրութեան վերայ դնելը յաջողացնող Մեծ Մարդ կոչուողներ։

Իսկ Դուք, ո թեմական բարձր Սրբազան Առաջնորդ Տէր-Գարեգին Արք-եպիսկոպոս Սաթունեանց, արժանընտիր Ասպետ Կայսերական շքանշանի, Դուք, եթէ կամենում էք Ձեր յետևից մի լուսաւոր գիծ թողնել, ներբողներով փառաբանութեան յաղթանակ տանել, հաղարաւոր բերաններից օրհնութեան և գովաբանութեան ալէլուիաներ լսել, այսօրուանը՝ մի ձգէք վաղուեան, այսօր և եթ աշխարհականներից և հոգևորականներից խառն ժողովներ կազմեցէք, և այս նշանաւոր գործքը՝ ամենայն յաջողութեամբ ի կատար ածեցէք, այն ժամանակ կ'տեսնէք, որ արդարև մի մեծ գործք էք կատարել, մի մեծ գործք՝ որ քանի դնայ այնքան գեղեցկանալու է և կատարելագործուելու. և միշտ յիշեցնելու է Ձեր անկեղծութեամբ վերաբերուիլը այս Մեծ ու գեղեցիկ Գործքին։

Գործակալ Տփխիսի

Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի

ՅՕԴԻԱԾ Ա.

Տփխիսի Հայ եկեղեցիներ, քահանաներ սարկաւագներ դպիրներ եւ տիրացուներ.

1, Վանաց առաջ եկեղեցի

1, Ղևոնդ աւագ քահանայ Խարազեանց
2, Եղնիկ աւագ քահանայ Երզնկեանց
3, Գիւտ աւագ քահանայ Աղանեանց
4, Գրիգոր քահանայ Խօջաէնաթեանց
5, Գալուստ քահանայ Աբուլեանց
1, Սարգիս սարկ. Ալիխանեանց
2, Սարգիս սարկ. Խուցեանց

2, Ծիրանաւոր Ռխատատեղու եկեղեցի

6, Ղևոնդ քահանայ Տէր-Սարգսեանց

3, Սուրբ Սարգիս

7, Կոստանդիանոս քահանայ Արարատեանց
8, Եղնիկ քահանայ Ալխազեանց

4, Հրեշտակապետաց եկեղեցի

9, Բարկէն քահանայ Տէր-Խաչատրեանց

5, Կաթուղիկէ Ս. Աստուածածին

10, Ստեփաննոս աւագ քահ. Սամուէլեանց

11, Աշոտ քահանայ Թէմուրաղեանց
12, Գրիգոր քահանայ Կախոյեանց
13, Յովհաննէս քահանայ Ամիրխանեանց

6, Բեթղեհեմու Ս. Աստուածածին

14, Գրիգոր աւագ քահ. Տէր-Բարսեղեանց
15, Գէորգ քահանայ Մէհրաբեանց
16, Յովսէփ քահանայ Աբուլեանց

7, Կուսանաց Ս. Ստեփանոս անապատ

17, Արսէն աւագ քահանայ Բագրատունի

8, Բարափի Ս. Յակոբ

18, Յովհաննէս քահանայ Պապովեանց
» Օգնական Ղևոնդ քահանայ Մեհրաբեանց

9, Մողնեոյ Ս. Գէորգ

19, Սիմէոն աւագ քահանայ Զմշկեանց
20, Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանց
21, Սահակ [illegible]սգ քահանայ Սահակեանց
22, Վարդան քահանայ Տէր-Ղևոնդեանց
3, Յակոբ սարկ. Պարոնեանց

10, Նորաշենու Ս. Աստուածածին

23, Գէորգ աւագ քահանայ Տէր-Տէրեանց
24, Դաւիթ քահանայ Գիրգիտեանց
25, Թադէոս քահանայ Երուանդեանց
26, Սարգիս աւագ քահանայ Շիրոյեանց

11, Աւետեաց Ս. Աստուածածին

27, Գէորգ աւագ քահանայ Աբուլեանց
28, Զաքարիա քահանայ Զարդեղեանց
29, Արշակ քահանայ Մինասեանց
30, Մեսրոպ քահանայ Տարիէլեանց

12, Ս. Նշան

31, Գրիգոր քահանայ Շերմազանեանց
32, Գարեգին քահանայ Առաքելեանց

13, Տափի-թաղի Ս. Գէորգ

33, Յովհաննէս աւագ քահ. Մարտիրոսեանց
34, Յովսէփ քահանայ Տէր Պետրոսեանց
4, Միքայէլ սարկ. Տէր-Յարութիւնեանց

14, Զրկիներանց ս. Կարապետ

35, Սիմէոն քահանայ Աբրահամեանց
36, Գրիգոր աւագ քահանայ Երզնկեանց

15, Վերայի ս. Խաչ

37, Գէորգ քահանայ Տէր-Աւետիսեանց
» Օգնական Աւետիս ք. Տէր-Աւետիսեանց

16, Շամքոռեցւոց Ս. Աստուածածին

38, Համազասպ ա. քահ. Տէր-Յովհաննիսեանց
39, Շմաւոն քահանայ Տէր-Բարսեղեանց
5, Սարգիս սարկ. Իփակեանց

17, Զորաբաշի Ս. Գէորգ

40, Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի

18, Էջմիածնեցւոց Ս. Գեորգ

41, Ներսէս աւագ քահանայ Աբովեանց
42, Բարսեղ քահանայ Տէր-Բարսեղեանց
43, Ղևոնդ քահանայ Մամիկոնեանց
6, Համբարձում սարկ. Բարիմեանց

19, Ս. Մինաս

44, Սարգիս աւագ քահանայ Իգիթեանց
45, Յարութիւն քահանայ Շախեանց

20, Նահանգական բանտի Ս. Վարդանանց եկեղեցի

46, Գրիգորիս քահանայ Մատինեանց

21, Խօջիվանաց Ս. Աստուածածին

47, Բարդուղիմէոս ք. Տէր-Յարութիւնեանց

22, Նաւթյուղի Ս. Գեորգ

48, Աղէքսանդր աւագ քահ. Վարդանեանց

23, Ս. Կարապետ

49, Գաբրիէլ աւագ քահ. Տէր-Գաբրիէլեանց
50, Գէորգ քահանայ Սաղոյեանց

24, Զուղուբերու Ս. Աստուածածին

51, Յովհաննէս քահանայ Իւզբաշեանց

25, Կուկիոյ Ս. Աստուածածին

52, Աղէքսանդր քահ. Տէր-Յովհաննիսեանց

53, Գրիգոր քահ. Շահնազարեանց
7, Սարգիս սարկ. Օտեանց

26, Թանդոյեան Ս. Աստուածածին

54, Ներսէս աւագ քահանայ Ղամազեանց
55, Սահակ քահանայ Սահակեանց
56, Յարութիւն քահանայ Ճուղուրեանց

27, Ս. Գրիգոր Լուսաւորիչ

57, Արշակ քահանայ Յարութիւնեանց

Դպիրներ եւ տիրացուներ

1, Նիկողայոս Բաւէեանց (ուրարակիր)
2, Աւետիք Պապովեանց »
3, Յովհաննէս Համբարձումեան »
4, Զաքար Զաքարեանց »
5, Սարգիս Ասլամազեանց »
6, Մարտիրոս Սիմէոնեան »
7, Կարապետ Ղազարեանց »
8, Տիգրան Տէր-Դաւթեանց »
9, Արշակ Շխեանց
10, Սարգիս Սիրունեանց
11, Ղուկաս Ղուկասեանց
12, Յովհաննէս Գիրգիրեանց
13, Յովհաննէս Տ. Սարգսեանց
14, Գաբրիէլ Կուրղանեանց
15, Գարեգին Սրուանձտեանց
16, Մարտիրոս Ռուշանեան
17, Խաչատուր Յարութիւնեանց
18, Բագրատ Երզնկեանց

19, Գէորգ Շերեանց
20, Մատթէոս Մարգարեան
21, Յարութիւն Բասեանց
22, Մկրտիչ Սողոմոնեանց
23, Ռուբէն Եղոյեանց

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Տփ. Հայ քահանաների Միաբանութեան թիւը եւ ընտրութիւնը։

1, Տփխիսի Հայ քահանաների Միաբանութեան թիւը՝ սահմանափակելու է 50 թուով, սարկաւագներին 12. իսկ դպիրներինը 38։

2, Տփխիսի հայ քահանաների Միաբանութեան որոշուած թուից աւելի ձեռնադրութեան հնարաւորութիւնը և տեղափոխութիւնը՝ խզաւ արգելուելու է։

3, Կենսաթոշակ ստացող և մեռած քահանաների բաց տեղերի թիւը լրացնուելու է նոր ձեռնադրուած քահանաներով երրորդ յօդուածի չորրորդ համարի նախագծովը։

4, Որ և է եկեղեցում առ նուազն հինգ տարի ծառայող տիրացուներին՝ ընտրելու է Ծխական ժողովուրդը և առաջարկելու քահանայական Ընդհանուր ժողովին. իսկ Ընդհանուր ժողովում ձայների առաւելութիւն ստացողը՝ Վարչական ժողովի միջոցաւ առաջարկուելու է Վիճակային կոնսիստորիային ընտրեալ տիրացուի գործքին ընթացք տալու հոգևորականութեան մէջ ընդունելու համար։

5, Սարկաւագացուներին՝ միմիայն յօդուածիս չորրորդ համարի նախագծովը՝ ընտրուած դպիրներից՝ ընտրելու է քահանայական Ընդհանուր ժողովը և խոնարհաբար առաջարկելու բարձր սրբազան թեմական Առաջնորդին՝ բաց տեղի վերայ սարկաւագ ձեռնադրելու։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Տփխիսի Հայ քահանաների Միաբանութիւնը։

1, Տփխիսի Հայ քահանաների Միաբանութիւնը ընդունելու է Տփխիսի բոլոր Հայ ժողովրդին մի համայնք, և Տփխիսի բոլոր եկեղեցեաց քահանաներին հանդերձ սարկաւագներով և հոգևորականութեան մէջ ընդունված դպիրներով մի միաբանութիւն։

2, Տփխիսի Հայ քահանաների Միաբանութիւնը բոլոր աշխատանքը և վարձատրութիւնը ասաիճանաբար հաւասարեցնելու է. այն է 1—25 տարի ծառայողին՝ համահաւասար, 25-ից—35 տարի ծառայողին՝ համահաւասար. 35 տարին լրացնողին՝ ցմահ կենսաթոշակ։ Սոյն կանոնը գործադրուելու է սարկաւագների և հոգևորականութեան մէջ ընդունված դպիրների վերաբերութեամբ էլ. (Յօդ. ԺԹ)։ (դպիրներ, պէտք է հասկանալ հոգևորականութեան մէջ օրինական կարգաւ ընդունվածները)։

3, Տփխիսի Հայ քահանաների Միաբանութիւնը՝ մեռնող քահանային իւր հաշուով է թաղելու. այրին ստանալու է ցմահ ամսական, եթէ որբերը փոքր են՝ թէ ըստ նիւթականին և թէ ըստ բարոյականին խնամելու է մինչև 22 տարի հասակի հասնիլը՝ արականի, և պսակը՝ իգականի։

4, Տփխիսի Հայ քահանաների Միաբանութիւնը, եթէ քահանայի պէտք ունենայ, այս դէպքում քահանայական Ընդհանուր ժողովը՝ ծխականների ընտրած և սարկաւագ ձեռնադրուածներից ընտրելու է երեքին,

և նոցա խոնարհաբար առաջարկելու է թէմական բարձր Սրբազան Առաջնորդի բարեհաճութեանը, և նա ըստ իւր ազատ ընտրութեան՝ նորանցից մէկին ձեռնադրելու է հանգուցեալ քահանայի բաց տեղի վերայ քահանայ։

5, Տփխիսի Հայ քահանաների Միաբանութիւնը ունենալու է մի գանձարանական ժողով, որ քահանայապատկան զանազանակերպ արդիւնքները ստանալու է, և գանձապահի ձեռքով յանձնելու բանկը ի պահեստ և յաճումն. և մի վարչական ժողով, հսկելու բարեկարգութեանց, ստուգելու Գանձարանական ժողովի հաշիւները, գտնելու արդիւնքի աւելի յուսալի աղբիւրներ, և միշտ մտածելու քահանայական վիճակի լայն և ընդարձակ ապահովութիւնը և պատուի նախանձելի բարձրութիւնը։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Գանձարանական ժողով

1, Գանձարանական ժողովի անդամները ընտրելու է քահանայական Ընդհանուր ժողովը, եռամեայ ժամանակաւ, լրանալուց յետոյ՝ կարող են վերընտրուիլ։

2, Անդամները լինելու են երկու քահանայ և չորս աշխարհականներ։

3, Աշխարհականներն ստանալու են ամսական որոշ տոկոս ռոճիկ. մկրտութեան, պսակի, թաղման և գերեզմանօրհնեաց արդիւնքներից։

4, Գանձարանական անդամներից մի քահանայ և երկու աշխարհական անդամները պարտաւոր են առաւօտեան ժամը 10-ից նիստ ունենալ մինչև ճաշու ժամը մէկը, իսկ ժամը մէկից մինչև երեկոյեան ժամը 6-ը

միւս կարգի մի քահանայ և երկու աշխարհական անդամները՝ շարունակ ամեն օր։

5, Գանձարանական ժողովի նիստերը լինելու են Կոնսիստորիայի սենեակներից մէկում, իւր բոլոր կահաւորութեամբ հանդերձ։ Նորան կից լինելու է Վարչական ժողովի սենեակը։

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Գանձարանական ժողովի վերաբերութեամբ մի քանի կէտեր։

1, Գանձարանական և Վարչական ժողովներն ունենալու են կնիք, մէջ տեղը բաց Աւետարան՝ Խաչը գլխին, շուրջը «Տփ. Հ. Ք. միաբանութիւն. և տարեթիւը, այս կնիքը լինելու է Վարչական ժողովի քարտուղարի մօտ։

2, Գանձարանական և Վարչական ժողովների անդամների մէկի հիւանդութեան և կամ բացակայութեան ժամանակ, նորա անձնափոխանորդը կարող է փոխարինել՝ բացակայի բոլոր իրաւունքներով։

3, Գանձարանական ժողովի մթերած գումարը՝ յանձնելու է Պետական և կամ մասնաւոր բանկերը՝ որոշ ժամանակով։

4, Գանձարանական ժողովն՝ իւր մօտ պահելու է ոչ աւել 100 ռուբլուց։

5, Գանձարանական ժողովն իւրաքանչիւր ամսավերջին՝ հաշիւ տալու է Վարչական ժողովին, իսկ տարուայ վերջը՝ քահանայական Ընդհանուր ժողովին։

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Գանձարանական ժողովի ունեցվածքը

1, Գանձարանական ժողովը ունենալու է մի Քարտուղար և մի Գանձապահ. քահանայական Ընդհանուր ժողովի ընտրութեամբ։

2, Գանձարանական ժողովը ունենալու է երկու սպասաւոր, ուղարկելու կարգադրութեանց մասին տեղեկութիւն տալու քահանաներին և այլոց։

3, Գանձարանական ժողովը ունենալու է առանձին առանձին երեք կարոնաւոր մատեաններ ծնելոց, պսակելոց և ննջեցելոց. այլ և մի մատեան՝ յուշարար, յայտնող յուղարկաւորութեանց մասնակցող քահանաների հերթերը, օրինակ այս ինչ քահանան՝ այս ինչ շաբաթում մասնակցել է այս ինչ յուղարկաւորութեանը, այժմ հերթը այս ինչ քահանայինն է (յօդ. ը. համար 5)։ Եւ այսպէս ջանալու է ընդմիշտ աշխատանքի հաւասարութիւնը ճիշտ պահպանել՝ այլև ամեն տեսակ ծառայութեանց մէջ. միայն հիւանդը և բացական ազատ են, բացական կարող է յետոյ՝ իւր բաց թողածները լրացնել։

4, Գանձարանական ժողովը ունենալու է մի դրամարկղ՝ մթերելու առձեռն ժողովուած դրամները։

5, Գանձարանական ժողովի Գանձապահն էլ ունենալու է չորս առանձին առանձին մատեաններ ծնելոց, պսակելոց և ննջեցելոց, որոնց մէջ զատ զատ մուծելու է մուտքը այլև մի մատեան ընդհանուր մտից և ելից։

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/XI. 1922
ԱՄԵՆԻԱ. Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Է.

Ծիսակատարութեան արդիւնքի բանակութիւնը

1, Գանձարանական ժողովը ծիսակատարութեանց արդիւնքների քանակութիւնը պէտք է խառն ժողովով որոշէ, որ ժողովուրդը իւր տալիքը գիտենայ և ըստ այնմ առանց սակարկութեան իւր տալիքը հատուցանէ։

2, Ժողովուրդը բաժանելու է զանազան դասակարգութեան, առաջին դասակարգութիւնը համարելու է չքաւորներին և աղքատներին, որոնց ծէսը կատարելու է ձրի, սակայն Ը-րդ յօդուածի ծրագրովը։

3, Երկրորդ դասակարգութիւնից ստանալու է ծնելոց համար (.....) ռուբլի, պսակելոց (.....) ռուբլի և ննջելոց (.....) ռուբլի։

4, Երրորդ դասակարգութիւնից ստանալու է ծնելոց համար (.....) ռուբլի, պսակելոց (.....) ռուբլի և ննջեցելոց (.....) ռուբլի։

5, Չորրորդ դասակարգութիւնից ստացուելու է ծնելոց, պսակելոց և ննջեցելոց համար՝ նոցա կարողութեանցը և նոցա սրտերի ազնուութեանցը համաձայն՝ արդիւնք։

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Գանձարանական ժողովի գործը

1, Գանձարանի ժողովի անդամները իւրեանց քարտուղարովը և գանձապահովը ամեն օր նիստ են ունենալու, և լինելու են ազատ որ և է պաշտօն կատարելուց։

2, Գանձարանական ժողովը մկրտութեան կնքահօրից ստանալու է կնքագրամը և յանձնելու գանձա-

պահին, որն անմիջապէս մուծելու է ծնելոց մատեանում, իսկ քարտուղարը նոյնպէս մուծելու է ծնելոց մատեանում, և կտրօնը կտրել և տալու է կնքահօրը, մկրտող քահանան կնքահօրիցը ստանալով կտրօնը՝ առանց որ և է պատճառաբանութեան և պահանջման մկրտելու է երեխային և ըստ սովորականի՝ մուծելու չափարերականում, մահակնուքներն ազատ են ձեւականութիւններից։

3, Գանձարանական ժողովն նոյնպէս ստանալու է պսակուող փեսայացուներից և հարսնացուներից պսակադրամը և յանձնելու գանձապահին, որ անմիջապէս մուծելու է պսակելոց մատեանում, իսկ քարտուղարը նոյնպէս մուծելու է պսակելոց մատեանում և կտրօնը կտրելու և տալու է փեսայացուին, օրինակատար քահանան կտրօնն ստանալով Ս. Պատարագից յետոյ անմիջապէս կատարելու է պսակը և մուծելու չափարերականում։

4, Գանձարանական ժողովն ստանալու է ննջեցելոց անբիծքների, թաղմելանների արդիւնքը, ստանալու է կողոպուտները և մոմերը (կողոպուտները և մոմերը վերածելու է դրամի) Ս. սեղանների մոմերը և շաքարները (շաքարները ամսավերջին հաւասար բաժանելու է քահանաներին, սարկաւագներին և դպիրներին). եօթը և քառասուն պատարագներինը, հոգեհանգիստներինը, այլև յուղարկաւորութեանց մասնակցող քահանաների և երգեցիկ խմբի ստանալի արդիւնքները։

5, Գանձարանական ժողովը կարգապահական մատեանի ցուցման համաձայն գրելու է գործակալին, որ նա իւր սպասաւորի միջոցաւ յայտնէ նշանակուած հերթակալ քահանաներին և խմբին, որոնք առանց որ և է պատճառաբանութեանց անթերի կատարելու են կարգադրուած պատուէրները։

ՅՕԴՈՒԱԾ Թ.

Վարչական ժողով

1, Վարչական ժողովի անդամները լինելու են երեք քահանայ, մի սարկաւագ քարտուղար. և ունենալու են երկու սպասաւորներ.

2, Վարչական ժողովի անդամներն և քարտուղարը ընտրուելու են հանդերձ անձնափոխանորդներով ընդհանուր քահանայական ժողովից. եռամեայ ժամանակամիջոցաւ, ազատ ո և է ծառայութիւնից, ժամանակին կարող են վերընտրուիլ, կնիքը՝ գանձարանական ժողովինն է լինելու։

3, Վարչական ժողովը իւրաքանչիւր ամսի վերջին ստուգելու է գանձարանական ժողովի և գանձապահի հաշիւները։

4, Վարչական ժողովը ստուգելու է իւրաքանչիւր քահանայի յուղարկաւորութեանց մասնակցելու հերթակալութեան թուերը և աշխատանքների հաւասարութիւնը (յօդ. Զ. 3)։

5, Վարչական ժողովը աստիճանաբար տուգանքի է ենթարկելու զանցառու քահանաներին, սարկաւագներին և դպիրներին. (յօդ. Ի. համար 3)։

ՅՕԴՈՒԱԾ Ժ.

Մեռելոց

1, Վարչական ժողովը գերեզմանատունը բաժանելու է զանազան մասերի, և ամեն մի մասում նշանակելու է մի մի քահանայ և նոյն նշանակուած քահանան չէ ունենալու իրաւունք իւր համար մասնագրած

սահմանից անցնել մի ուրիշ քահանայի մասը։

2, Վարչական ժողովը գերեզմանօրհնեաց համար տպագրել տալու է կարտոնի փոքր տոմսակներ վերա-նները նշանակելու է 20 կոպէկանոցից սկսած 10 ռուբ-լանոց։

3, Վարչական ժողովը գերեզմանատան դռներում աջ ու ձախ կողմերումը դնել տալու է երկ երկու սե-ղաններ և նշանակուած մարդիկ տոմսերը վաճառելու են ներս մտնող ժողովրդի վերայ. և գերեզմանօրհնէքից յետոյ վաճառուած տոմսերի դրամները անմիջապէս հաշուելու և յանձնելու են գանձարանական ժողովի գանձապահին հանդերձ ստորագրական թղթերով։

4, Տոմս գնող ժողովուրդը իւր կամեցած գերեզ-մանը օրհնել տալու է՝ և դրամի փոխարէն տոմսը յանձնելու է գերեզմանօրհնող քահանային։

5, Գերեզման օրհնելուց վերջը իւրաքանչիւր քահանայ վերադառնալով տուն, իւր տոմսերը զատելու է, յայտարարութեան մէջ իւրաքանչիւրը նշանակելու է և յանձնելու Վարչական ժողովին, որը համեմատելով գումարի հետ յանձնելու է գանձարանական ժողովին։

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.

Տ ն օ ր հ ն է f

1, Վարչական ժողովը, քաղաքը բաժանելու է զանազան մասերի և իւրաքանչիւր քահանայի յատ-կացնելու է սահմանափակ մի յայտնի մասն։

2, Քահանան ո և է պատճառաբանութեամբ չէ ունենալու իրաւունք, իրան յատկացրած սահմանից անցնել մի ուրիշի մասը, տուն օրհնելու։

3, Վարչական ժողովը տպագրել տալու է չորս

վերշոկ աւել կամ պակաս երկարութեամբ և երեք վեր-շոկ լայնութեամբ տետրակներ՝ էլէքտրաքարշի տոմ-սակների տետրակների նման, վերից նշանակել տալու է 20 կոպէկից սկսած 25 ռուբլանոց և յանձնելու տուն օրհնող քահանային, և նա տնօրհնէքից ստացած դրամի համապատասխան տետրակիցը կտրելու է կտրոնը և յանձնելու տանտիրոջը՝ տիրացուի ներկայութեամբ։

4, Տուն օրհնող քահանան տետրակը ստորագրու-թեամբ ստանալու է և ապա գնալու և օրհնելու իւր համար որոշած քաղաքամասի տները։

5, Տուն օրհնող քահանաները տնօրհնէքից վերջը ստացած դրամները, կտրոնների արմատների հետ ըս-տուգելուց յետոյ, դրամները արմատների հետ յանձ-նելու են Վարչական ժողովին, և նա Գանձարանական ժողովի Գանձապահին։

ՅՕԴՈՒԱԾ ԺԲ.

Արդիւնքների աղբիւրներ

1, Վարչական ժողովը ընդ միշտ աշխատելու է գտնել նորանոր արդիւնքների զանազան աղբիւրներ, ընտրելու է մի քանի եկեղեցիներ, նորանց տօնը կա-տարելու ամենաշքեղ հանդէսներով, օրինակ քաղաքիս Հալլաբարի մասում գտնուած ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցւոյ համար, Թէմական բարձր Սրբազան Առաջ-նորդի օգնութեամբ Մայր Աթոռից ս. Գրիգոր Լու-սաւորչի մասից մի փոքր մասն բերել է տալու և ամեն տարի նորա երեք տօներին նախապէս նշանակուած քահանաներով նախատօնանք կատարելու. և հետևեալ օրը հանդէսը աւելի շքեղացնելու առթիւ, պատարա-գիչը Թէմական Առաջնորդն է լինելու. քարոզներ և ճա-

ներ են խօսելու և այսպէս երեկոյեան և հետեւեալ օրերի վաճառուած մոմերի և խաչահամբուրի արդիւնքները յատկացնելու է Տփխիսի հայ քահանաների գանձարանին։

2, Վարչական ժողովը ունենալու է մի մեծ կըրպակ կից մի որ և է եկեղեցւոյ՝ յարմարը Աւետեաց և Տափի - Թաղի եկեղեցիքն են, միմիայն այնտեղ վաճառել տալու է եկեղեցական պատկերներ, Աւետարաններ, Խաչեր, Ջահեր, շամատաններ, շուրջառացուներ, շուրջառներ, սաղաւարտներ, վակասներ բուրվառներ, խաչուառներ և քշոցներ, որոնց արդիւնքը յատկացնելու է քահանաների գանձարանին։

3, Խօջիվանաց պէս՝ Վերայի գերեզմանատան արդիւնքն էլ յատկացնելու է քահանաների գանձարանին։ Այլև բոլոր եկեղեցիներում վերացնելու է գանձանակ շրջեցնելը՝ և նորա փոխանակ սեղանների վերայ դնելու է կնքած գանձանակատփեր, վերաները գրուած «Ս. Պատարագի յիշմունքներ և գանձանակներ» որոնց մէջ գոյացած արդիւնքն էլ յատկացնելու է քահանաների գանձարանին։

4, Եկեղեցեաց տարեկան արդիւնքների ծախքը մուտքից հանելով, մնացորդ գումարը Թէմական բարձր սրբազան Առաջնորդի, ընդհանուր քահանաների և երէցփոխանների ժողովի խորհրդով կարգաւորուելու է, մի մասը տալ բանկը՝ եկեղեցեաց պէտքերի համար, մի մասը յատկացնել՝ կարօտ ուսումնարաններին, մի մասը յանձնել Կոնսիստորիային՝ տարեկան զանազան ծուխուց համար. և մի մասը յատկացնել քահանաների գանձարանին, այլև քաղաքիս բոլոր եկեղեցեաց յանուն քահանաների կտակած և ամեն տեսակ բանկային տոմսերը և դրամները յատկացնուելու է Տփխիսի Հայ քահանաների գանձարանին։

5, Վարչական ժողովը Վանաց աւագ եկեղեցւոյ գաւթումը հանգուցեալ Գէորգ աւագ քահանայ Գալըստեանի նուիրած տանը և կամ մի որ և է եկեղեցւոյ յարմարաւոր սենեակներում բանալու է տպարան, և քահանաների անձեռնմխելի գումարներով բերել տալու նոր ձևի կատարելագործուած մեքենաներ, տառերի արմատներ, ձուլարաններ և այլ հարկաւոր մանրամասնութիւնները, ապա վարձել վարպետներ և գրաշարներ և սկսել գործը, որի արդիւնքը յատկացնելու է Տփխիսի Հայ քահանաների գանձարանին։

ՅՕԴՈՒԱԾ ԺԳ.

Գովելի գործունէութիւններ

1, Վարչական ժողովը Վանաց աւագ եկեղեցւոյ գաւթի յանուն ընծայացուների՝ նախկին Առաջնորդ, այժմ Էջմիածնի Ս. Սինոդի տեղակալ բարձր Սրբազան Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի կառուցած սենեակներում բանալու է Գրադարան-ընթերցարան, որ միշտ բաց է լինելու, և քահանաները, սարկաւագները և դպիրները ընդմիշտ պարապ ժամերում յաճախելու են և կարդալու թէ լրագրներ, և թէ գրքեր, և բացի սորանից անելու են վարժութիւններ թէ քարոզների և թէ հոգևոր ներկայացումների։

2, Վարչական ժողովը քահանաներից և դպիրներից կազմակերպելու է մի խումբ, տարուայ մէջ գոնէ առնուազն հոգևոր հինգ ներկայացումն տալու, որոնց արդիւնքը յատկացնելու է Տփխիսի Հայ քահանաների գանձարանին։

3, Վարչական ժողովը քահանաների աշխատասիրութիւնները տպագրելու է ձրի, և դրամի փոխարէն տանալու է տպագրած գրքերի երրորդ մասը յօդուտ

Տփխիսի Հայ քահանաների դանձարանին։

4, Վարչական ժողովը քահանաներից, սարկաւագներից, այլև քահանաների, սարկաւագների և դպիրների որդիներից և որդեգրներից ուսումները կատարելագործել ցանկացողներին՝ դանձարանի հաշուով ուղարկելու է արտասահման։

5, Վարչական ժողովը օգնելու է քահանաների, սարկաւագների և դպիրների աղջիկների պսակի օժիտին և պսակմանը՝ սահմանափակ դրամով։

ՅՕԴՈՒԱԾ ԺԴ.

Հրատարակութիւն

1, Վարչական ժողովը ջանալու է ստանալ իրաւունք մի շաբաթաթերթի հրատարակման, ի հաշիւ և յօգուտ դանձարանին։

2, Շաբաթաթերթի անունը կոչուելու է «Հայոց ս. Եկեղեցի»։

3, Շաբաթաթերթը հրատարակուելու է Տփխիսի քահանաների խմբագրութեամբ, որին աշխատակցելու են բոլոր ցանկացողները։

4, Շաբաթաթերթը լինելու է պատկերազարդ, և ամեն դուրս գալուն՝ պէտք է ունենայ առնուազն հինգ պատկեր. և պատկերները լինելու են Մայր Աթոռի, և զանազան տեսարանների, հռչակաւոր վանքերի, եկեղեցիների, ուսումնարանների, թագակիրների, կաթուղիկոսների, յայտնի հոգևորականների և մեծ մարդկանց։

5, Շաբաթաթերթի գինը լինելու է 10 ռուբլի. արտասահմանում 12 ռ., տասներկու տարի շարունակ ստացող բաժանորդի լուսանկարը հրատարակուելու է շաբաթաթերթում։

ՅՕԴՈՒԱԾ ԺԵ.

Նուէրներ եւ կտակներ

1, Եթէ մի բարեգործ մարդ և կամ մի կին կամենայ Տփխիսի Հայ քահանաների Միաբանութեան դանձարանին նուէր տալ 100 ռուբլուց մինչև 1000 ռուբլի. նուիրատուի նուէրը շնորհակալութեամբ կըտպագրուի «Հայոց ս. Եկեղեցի» շաբաթաթերթում. և ամեն տարի նուիրման օրը կըյիշատակուի միենոյն թերթում։

2, Եթէ մի բարեգործ մարդ և կամ մի կին, 5000 ռուբլի նուիրէ Տփխիսի Հայ քահանաների Միաբանութեան դանձարանին, նրա կենսագրութիւնը կըհրատարակուի «Հայոց ս. Եկեղեցի» շաբաթաթերթում, և ամեն տարի նորա նուէրը կըյիշատակուի միենոյն թերթում, այլև ս. Պատարագ կըմատուցուի. և նորա անունով քարոզներ և ճառախօսութիւններ կըլինեն։

3, Եթէ մի բարեգործ մարդ և կամ մի կին կամենայ 10,000 և աւելի ռուբլի և կամ կալուածներ նուիրել Տփխիսի Հայ քահանաների Միաբանութեան դանձարանին. ամեն տարի նորա նուիրման և կամ նորա ծննդեան օրը մեծ և շքեղ հանդէս կըկատարուի. Ա, նուիրատուի կենսագրութիւնը և պատկերը կըհրատարակուի «Հայոց ս. Եկեղեցի» շաբաթաթերթում։ Բ, Նորա իւղանկար պատկերը կըլինի Դանձարանական և Վարչական ժողովարաններում։ Գ. նուիրման օրուայ կատարուելի հանդիսի մասին՝ ամեն տարի թէ «Հայոց ս. Եկեղեցի» շաբաթաթերթում և թէ բոլոր լրագրներում ծանուցումն կըհրատարակուի։ Եւ Դ, նուիրման և կամ նորա ծննդեան օրը՝ ս. Պատարագ կըմատուցուի և բոլոր քահանաների, սարկաւագների և դպիրների մաս-

նակցութեամբ շքեղաշուք «մաղթանք» կըկատարուի. քարոզներ և ճառախօսութիւններ կըլինեն. Հոգևոր ներկայացումներ կարուեն. որտեղ կըներկայացնուի նուիրատուի իւղաներկ մեծադիր պատկերը. և կըկարդացուի նուէրը։

4, Եթէ մի բարեգործ մարդ և կամ մի կին կըտակէ Տփխիսի Հայ քահանաների Միաբանութեան գանձարանին 100—1000 ռուբլի, առաջի համարի պատիւը կըտրուի։

5, Եթէ մի բարեգործ մարդ և կամ մի կին կատակէ Տփխիսի Հայ քահանաների Միաբանութեան Գանձարանին 5000 ռուբլի, նորան յօդուածիս երկրորդ համարի պատիւը կտրուի, իսկ եթէ կատակէ 10,000 և աւելի ռուբլի և կամ կալուածք, նորան կտրուի երրորդ համարի պատիւը բոլոր մանրամասնութեամբ։

ՅՕԴՈՒԱԾ ԺԶ.

Վերահսկող քահանայ

1, Գանձարանական և Վարչական ժողովների անդամոց գործունէութեանց վերայ, Ընդհանուր քահանայական հաստատութեանց բարեկարգութեանց, եկեղեցեաց մաքրութեանց, քահանաների, սարկաւագների և դպիրների վարուց և շարժմանց վերայ լինելու է մի վերահսկող քահանայ։

2, Վերահսկող քահանան լինելու է խիստ, անկեղծ և նախանձախնդիր օրինաց պահպանութեան։

3, Վերահսկող քահանան՝ ազատ է լինելու որ և է պաշտօնից։

4, Վերահսկող քահանան միշտ ի ժամու և ի տարաժամու շրջելու է, ազատ մուտ գործելու թէ երկու

ժողովներում, և թէ ամեն տեղ՝ ուր հոտ է բուրում հոգևորականի. սակայն չունի իրաւունք միջամտելու, որ և է անձնաւորութեան սխալն ուղղելու, և գործունէութեանը՝ որ և է պաշտօնավարի։

5, Վերահսկող քահանան՝ միմիայն, կազմելու է արձանագրութիւն, նկատելով ժողովների անդամոց թոյլ վերաբերմունքը իւրեանց պաշտամանց. և զարտուղների ընթացքը բարեկարգութեանց մէջ, և իւր մթերած արձանագրութիւնները կարդալու է Ընդհանուր ժողովներում. ուր ըստ արժանոյն խորհրդակցելուց յետոյ՝ որոշուելու է զանցառուների պատիժները տուգանքով։

ՅՕԴՈՒԱԾ ԺԷ.

Ընդհանուր ժողովներ

1, Ընդհանուր ժողովներ լինելու են տարին չորս անգամ, իսկ կարևոր դէպքում այլև արտակարգ։

2 Ընդհանուր ժողովը ամէն տարի՝ Յունվարին, ընտրելու է իւր նախագահը և քարտուղարը։

3, Ընդհանուր ժողովի խորհրդածութեան նիւթերը նախագահը երեք օր առաջ գրաւոր յայտնելու է Տփխիսի քահանայական Միաբանութեան բոլոր անդամներին։

4, Տփխիսի Հայ քահանաների Միաբանութեան բոլոր անդամներն՝ ձայնի հաւասար իրաւունք են ունենալու. ձայների հաւասար դէպքում՝ գերակշռութիւնը նախագահի կողմն է լինելու։

5, Ժողովից բացակայ անդամը՝ չէ կարող իւր ձայնը ուրիշի տալ և ոչ թղթով։

ՅՕԴՈՒԱԾ ԺԸ.

Բարեկարգումներ

Վարչական ժողովը Տփխիսի բոլոր հայ քահանաներին ընդունելով իբրև մի եկեղեցւոյ միաբանութիւն և համարելով իբրև մի տան որդիներ, իւրաքանչիւրի համար որոշելու է համահաւասար աշխատանք, և իւրաքանչիւրին էլ վարձատրելու է մի միայն քահանայական գանձարանից, ուստի ոմանց տալու է ուսուցչութեան պաշտօն՝ որ աւելի տիրապետեն ուսուցչութեանը, ոմանց քարոզչութեան, ոմանց ծիսակատարութեանց, մկրտել պսակել, թաղել, ժամասել, պատարագներ մատուցանել և մասնակցել յուղարկաւորութեանց, հոգեհանգիստներին և անբիծքներին. և ոմանց գործակալութեան և այլ պաշտօններ։

2, Վարչական ժողովն որոշելու է օրինակատարութեանց ժամանակամիջոցը առաւօտեան ժամը 9-ից սկսած երեկոյեան ժամը 6-ը կատարուելու են թէ մկրտութիւնները, թէ պսակները և թէ ննջեցեալները։

3, Վարչական ժողովը՝ ցանկութիւն յայտնող քահանաներին ընակեցնելու է եկեղեցապատկան տներում ձրի։

4, Վարչական ժողովը վերացնելու է տուն փարատելու աւելորդ սովորութիւնը, նոյնպէս քելէխը և ննջեցելոց տիրոջը համոզելու է, որ քելեխի վերայ անելի ծախուց՝ եթէ ոչ ամբողջը, գոնէ կէսը նուիրէ աղքատախնամ ճաշարաններին և կարօտ ուսումնարաններին։

5, Վարչական ժողովը մտածելու է ընդ միշտ բարեկարգել քահանայական դասը, և նորա լի ու լի ապահովութեան համար, և ապահովութիւնը հաստատ հիմունքի վերայ դնելու համար՝ անդադար հեռուն և հեռուն մտածելու է։

ՅՕԴՈՒԱԾ ԺԹ.

Ամսականների բաժանումը

1, Ամսականների քանակութիւնը՝ որոշելու է Ընդհանուր ժողովը և բաժանելու է ընդ միշտ ամսի 25-ին. (յօդ. Գ. համար 2)։

2, Մի տարուայ ձեռնադրուած քահանան մինչև 25 տարին ստանալու է մի որոշ քանակութեամբ ռոճիկ։

3, Քսանհինգ տարին լրացրած քահանան մինչև 35 տարին ստանալու է մի որոշ քանակութեամբ ռոճիկ։

4, Երեսուն և հինգ տարի լրիւ քահանայական պաշտօն վարող քահանան՝ ստանալու է ցմահ կենսաթոշակ։

5, Սարկաւագների և դպիրների համար էլ պէտք է այս կարգը գործ դնել, իւրեանց համար որոշած ռոճիկների քանակութեանցը համաձայն։

ՅՕԴՈՒԱԾ Ի.

Դաս եւ հաստատութիւն կանոնադրութեանս

1, Վարչական ժողովը քահանաների միմեանց և կամ ժողովրդեան հետ պատահած անբաւականութիւնները քննելու է և ջնջելու տալ բաւականութիւն։

2, Վարչական ժողովը քահանայի կամ մի որ և է սարկաւագի և դպրի դատը պաշտպանելու է թէ հոգևոր և թէ քաղաքական դատարաններում ի հաշիւ գանձարանի։

3, Քահանան, սարկաւագը և դպիրը, եթէ իշխանութեան կողմից ծանր պատժի ենթարկուած լինի, այդ դէպքում ստանալու է ամսականի կէսը, արդարանալու դէպքում՝ սովորականը, իսկ պաշտամանց զանցառու յանցաւորներին Վարչական ժողովը ենթարկելու է աստիճանաբար տուգանքի. (յօդ. Թ. համար 5),

4, Տփխիսի Հայոց քահանաների Միաբանութիւնը՝ սոյն կանոնադրութիւնը ընդհանուրի քննադատելուց յետոյ (քննադատութեան ժամանակամիջոցը՝ որոշուած է մինչև տարւոյս հոկտեմբերի վերջը) խոնարհաբար ներկայացնելու է հանդերձ յայտարարութեամբ Բարձր Սրբազան Թէմական Առաջնորդին, և ի ձեռն նորա ի հաստատութիւն Վեհ. Հայրապետի աղգիս։

5, Տփխիսի Հայ քահանաների Միաբանութիւնը սոյն կանոնադրութեան հաստատութեան իրաւունքն ստանալուն պէս՝ սկսելու է ընդհանուր ժողով կազմել նախագահութեամբ Թէմական Առաջնորդի և ընտրել Գանձարանական և Վարչական ժողովների Անդամները, Քարտուղարները. Գանձապահը և Վերահսկող քահանան, ընտրութիւնից յետոյ՝ ընտրուածներին գրաւոր առաջարկելու է ի հաստատութիւն Թէմական Առաջնորդին. յետ հաստատմանց՝ ժողովներն սկսելու են իւրեանց պաշտամանց գործունէութիւնները, որոնք անմիջապէս տպագրել տալու են հաստատուած կանոնադրութիւնից բազմաթիւ օրինակներ. և ցրելու են քաղաքիս բոլոր Հայ ժողովուրդներին, այլև լրագրներով և քարոզներով ծանօթացնելու ժողովրդին կանոնադրութեան հետ, որ ըստ այնմ վարուի, և միշտ ջանայ չմեղանչել կանոնադրութեան դէմ՝ որով ծանրութեամբ հաստատուած բարեկարգութեանը խանգարուին պատճառէ. ըստ որում՝ քահանաներից ճարպիկ շողոքորթը կջանայ շողոքորթութեամբ գաղտնի դրամներ շորթել շողոքոր-

թուող ծխերից, այս կերպ վարուողներին՝ նախ խրատիւ պատիժելու են Գանձարանական և Վարչական ժողովները՝ և երկրորդ՝ Ինքը ժողովուրդը, և բոլոր ժողովուրդը պէտք է լաւ հասկանայ, որ Ինքը չունի տալու ոչ մի քահանայի. սարկաւագի և դպրի մի կոպէկ անդամ, այլ իւր տալուն՝ միմիայն տալու է Գանձարանական ժողովին, և այսպիսի խստութեամբ և հետաքրքիր լարուած ուշադրութեամբ պահպանած կանոնադրութիւնը՝ անշուշտ կունենայ յարատևութիւն. այլև կդառնայ պատճառ և դիւղական զրկուած քահանաների վիճակների բարւոքմանը մտածելու և ճանապարհ հարթելու։

Այսպիսի մի կանոնադրութիւն էլ՝ կարելի է կազմել և Կուսակրօն հոգևորականների համար, որոնց վիճակը վերին աստիճանի անբարեկարգ և կարեկցալի է։

Հ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библ.
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0160117